«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջ

Հաստատված է
Տնօրինական խորհրդի նիստում
«29» 08 2019թ.
Արձանագրություն № 1.

Հաստատում եմ
«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի
Տնօրեն՝ Ի. Վարդանյան
«02» 09 2019թ.

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ 2019

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգը սահմանում է «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի այսուհետ՝ (այսուհետ Քոլեջ) ակադեմիական ազնվության դրույթները, սկզբունքներն ու չափանիշները, ակադեմիական անազնվության դրսևորումները և դրանց կանխարգելման միջոցները, դասախոսական անձնակազմի, ուսանողների և նրանց ծնողների դերն ակադեմիական ազնվության ապահովման գործում:

1.2. Սույն Կանոնակարգն ընդունվել է Քոլեջի կողմից ակադեմիական ազնվությունը խթանելու նպատակով: Այն մշակված է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության հիմնադրման մասին կոնվեցիայի 2-րդ հոդվածի (14.07.1967թ.), մտավոր սեփականության բնագավառում իրավախախտումները կանխելու նպատակով համագործակցության մասին համաձայնագրի (20.07.1999թ.), ՀՀ Սահմանադրության, Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին օրենքի (15.06.2006), **Տեղեկատվության ազատության մասին** օրենքի (23.09.2003), Քոլեջի կանոնադրության և ներքին կարգապահական կանոնների հիման վրա:

1.3. Քոլեջի ուսանողները, դասախոսական, օժանդակ և վարչական կազմը, ինչպես նաև արտաքին շահեկիցները պետք է տեղեկացված լինեն սույն Կանոնակարգին, որն տեղադրված է Քոլեջի պաշտոնական վեբ կայքում:

2. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ

2.1. **«Ակադեմիական աշխատանք»** նշանակում է ցանկացած գործողություն, որը կատարվել է Քոլեջի կրթական ծրագրերի և դասընթացների հետ կապված: Ակադեմիական աշխատանքը ընդգրկում է քննություններ, ավարտական աշխատանքներ կամ թեզեր, ստուգարքներ, հաշվետվություններ, ինքնուրույն, անհատական, լաբորատոր աշխատանքներ և գիտական փորձեր, որոնք կատարվում են Քոլեջի տարբեր ուսուցման ձևերով իրականացվող կրթական ծրագրերի շրջանակներում: Այն կարող է լինել գրավոր, բանավոր կամ էլեկտրոնային:

2.2. **Ակադեմիական ազնվություն** նշանակում է կատարել բոլոր ակադեմիական աշխատանքներն առանց շահագրգռվածության, գրագողության, խաբեության, կեղծիքի, ստելու, խարդախության, գողության կամ այլ անձանցից արգելված օգնություն ստանալու և չօգտվել տեղեկատվության ցանկացած արգելված աղբյուրից:

2.3. Ակադեմիական ազնվություն է համարվում՝

2.3.1. քննական աշխատանքների անցկացման ընթացքում ազնիվ և պատշաճ պահվածքը,

2.3.2. Գիտական և հետազոտական աշխատանքներում մտքերի, գաղափարների իրական հեղինակներին նշելը,

2.3.3. իրական հետազոտական արդյունքներով հիմնավորված աշխատանքի ստեղծումը,

2.3.4. մտավոր սեփականության բոլոր տեսակների պաշտպանումը:

2.4.Ակադեմիական ազնվությունը նպատակաուղղված է.

- կրթության որակի և դասավանդման արդյունավետության բարձրացմանը,
- ազնվության և անաչառության մթնոլոտ ստեղծելուն,
- բացառելու ցանկացած անազնիվ վարքագիծ՝ խթանելով սովորողների նկարագրի դրական որակների զարգացումը,
- ձևավորելու սկզբունքային, մտածող, հետազոտող, բանիմաց և լայնախոհ անհատներ, որոնք կարողանում են համարձակ արտահայտել իրենց մտքերը և հարգանքով են վերաբերվում այլ մարդկանց և նրանց ստեղծած արժեքների հանդեպ:

2.5. Ակադեմիական ազնվությունն անհրաժեշտ է Քոլեջի առաքելության և ռազմավարական նպատակների արդյունավետ իրականացման, ազնիվ և փոխադարձ վստահության մթնոլորտի ապահովման, որակյալ կրթական միջավայրի ձևավորման և ծառայությունների տրամադրման համար:

2.6. Ակադեմիական ազնվության մթնոլոտ ստեղծելն ու պահպանելն Քոլեջի աշխատողների պարտականությունն է: Քոլեջի ցանկացած անդամ պատասխանատվություն է կրում աշխատավայրի ներսում ազնվության ստեղծման և պահպանման համար, որը կնպաստի Քոլեջի հեղինակության բարձրացմանը:

3. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՆԱԶՆՎՈՒԹՅԱՆԸ ԲՆՈՐՈՇ ՀԻՄՆԱԿԱՆ ՎԱՐՔԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

3.1. Արգելված վարքագիծ

Ոչ մի ուսանող գիտակցաբար չպետք է կատարի, փորձի կատարել կամ աջակցի այլ ուսանողի կատարել անազնիվ գործողություն ակադեմիական աշխատանքի հետ կապված, որը պետք է առաջադիմության բարձրացման համար: «Գիտակցաբար» տերմինը, որ գործածվում է նախորդ նախադասությունում, նշանակում է, որ ուսանողը տեղյակ է, որ տվյալ ակադեմիական աշխատանքը ներկայացվելու է ակադեմիական առաջադիմության համար: «Գիտակցաբար» չի նշանակում, որ ուսանողը պետք է տեղեկացված լիներ, որ տվյալ գործողությունը խախտում է Քոլեջի ակադեմիական ազնվության քաղաքականությունը:

3.1.1. **Ակադեմիականան անազնվության օրինակներ**

- **Գրագողությունը** - Առանց համապատասխան աղբյուրի վկայակոչման ակադեմիական առաջադիմության համար կատարված աշխատանքի մեջ ընդգրկել բառեր, տերմիններ, գաղափարներ, կարծիքներ կամ տեսություններ, որոնք հեղինակային չեն: Գրագողությունը ընդգրկում է (սակայն չի սահմանափակվում) հետևյալ գործողությունները.

1) առանց չակերտների մեջ բերել այլ անձին պատկանող գրավոր կամ բանավոր խոսքերն ամբողջությամբ կամ մասամբ, տալ սխալ հղումներ և այլն,
2) ներկայացնել այլ անձին պատկանող գաղափարը, տեսությունը կամ բանաձևը որպես աշխատանքը ներկայացնող անձի բնագիր աշխատանք,
3) կրկնել վիճակագրական կամ դեմոգրաֆիական տեղեկությունները, որոնք հեղինակային չեն և սկզբնապես կազմվել են այլ անձի կողմից,

4) գնել (կամ այլ կերպով ձեռքբերել) այլ անձի կողմից կատարած աշխատանք կամ այլ առաջադրանք և ներկայացնել որպես ուսանողի ինքնուրույն աշխատանք:

- **Արգելված աջակցությունը** – Դասախոսի կողմից տրամադրել արգելված աջակցություն ցանկացած քննության կամ այլ ակադեմիական աշխատանքի վերաբերյալ: Քննությունների, ստուգարքների, լաբորատոր աշխատանքների և նմանատիպ գործողությունների ժամանակ ուսանողները պետք է տեղյակ լինեն, որ ցանկացած աջակցությունը (ինչպիսիք են գրքեր, գրառումներ, հաշվիչներ և այլ անձանց հետ խոսակցություններ) արգելված է՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այն հատուկ թույլատրված է դասախոսի կողմից: Արգելված վարքի օրինակները ընդգրկում են, սակայն չեն սահմանափակվում.

1) արտագրել կամ թույլատրել այլ անձանց արտագրել քննությունների պատասխան-ները, քննության ժամանակ փոխանցել կամ ստանալ տեղեկություններ,
2) տալ կամ ստանալ ավելի ուշ ժամկետի համար նշանակված քննությունների պա-տասխանները, այլ անձի փոխարեն լրացնել կամ թույլատրել այլ անձին ուսանողի փոխարեն լրացնել ամբողջ առաջադրանքը կամ դրա մեկ մասը,
3) կիրառել արգելված ծրագրավորող հաշվիչ կամ այլ էլեկտրոնային սարքեր և այլն:

- **Ստելը, կաշառելը, խարդախելը կամ կեղծելը,** - Ցանկացած ակադեմիական աշխատանքի կատարման կամ սույն Կանոնակարգի իրականացման հետ կապված կաշառում կամ ցանկացած կեղծ տեղեկությունների տրամադրում.

1) Ակադեմիական աշխատանքի անբավարար կատարման կամ չկատարման դեպքում կեղծ պատճառաբանություններ (քննությանը չներկայանալ ու կամ ակադեմիական աշխատանքը չներկայացնելու համար տալ կեղծ պատճառաբանություններ):
2) Փոփոխել աշխատանքը այն ներկայացնելուց հետո, բացառությամբ այն դեպքերի, եթե նման փոփոխությունները մտնում են առաջադրանքի պահանջների մեջ (ինչպիսիք են՝ դասախոսի գիտությամբ վերանայել տվյալ ակադեմիական աշխատանքը):
3) Վնասել համակարգչային սարքավորումները կամ լաբորատոր սարքավորումները ակադեմիական աշխատանքի գնահատումը փոփոխելու կամ կանխելու համար:
4) Գնահատականների կամ պատասխանների կեղծում՝ այլ գնահատական ստանալու նպատակով:
5) Այլ սովորողի կամ ակադեմիական աշխատանքի կեղծում և վնասում:
6) Քննության ժամանակ քննական հարցերի պատասխանների տրամադրումը այլ ուսանողների և այլն:

- **Գողությունը** - Գողանալ, վերցնել կամ մեկ այլ արգելված կերպով ձեռքբերել ակադեմիական ցանկացած աշխատանքին վերաբերյալ տեղեկություններ (ինչպիսիք են՝ քննությունները, գնահատականների գրանցումները, գնահատման ձևերը, գրքերը, աշխատանքները, համակարգչային սարքավորումները և տվյալ-ները, լաբորատոր նյութերը և տվյալները):
- **Համաձայնությունը՝**

1) աշխատանքի անբարեխիղճ կատարմանը աջակցելը, թեստային աշխատանքի, քննության կամ այլ տիպի աշխատանքների (ռեֆերատ, լաբորատոր աշխատանք և այլն) ուրիշի փոխարեն կատարումը կամ ուրիշի աշխատանքի հանձնումը սեփականի փոխարեն,
2) գնահատական ստանալու շուրջ համաձայնությունը ուսանողի և դասախոսի միջև և այլն:

- **Բազմապատճենումը՝**

1) Նույն աշխատանքը որպես տարբեր առաջադրանքներ կամ տարբեր վերնագրերով ներկայացնելը, միևնույն աշխատանքը տարբեր տիպի գնահատումների համար ներկայացնելը և այլն:

3.2. Պահանջվող վարքագիծ

Համաձայն սույն Կանոնակարգի՝ Քոլեջի դասախոսական, օժանդակ և այլ սպասարկող բաժնի և ուսանողական կազմի ցանկացած անդամ, որը տեղեկացված է սույն քաղաքականության խախտումների մասին, պարտավոր է տեղյակ պահել ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալին խախտումների վերաբերյալ:

- **Դասախոսական կազմ**

Սույն Կանոնակարգը ապահովում է Քոլեջում տեղի ունեցած ակադեմիական **անազնվության** դեպքերի ուսումնասիրության բացառիկ ընթացակարգը: Ըստ սույն Կանոնակարգի՝ դասախոսական կազմը պարտավոր է տեղյակ պահել ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալին խախտումների վերաբերյալ:

- **Ուսանողներ**

Քոլեջի ուսանող համարվելը նրա կողմից համաձայնություն է հանդիսանում ենթարկվել սույն սկզբունքներին և կանոնակարգին: Յուրաքանչյուր ուսանող պարտավոր է տեղեկանալ սույն փաստաթղթով սահմանված պայմաններին: Եթե ուսանողը խախտել է սույն քաղաքականության պայմանները, պայմաններին տեղյակ չլինելը չի ազատում պատասխանատվությունից:

4. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4.1. Քոլեջի դերն ակադեմիական ազնվություն ապահովելու գործում

- Մշակել և հաստատել ակադեմիական ազնվության Կանոնակարգը:
- Ապահովել փաստաթղթի հասանելիությունը շահակիցների հանրությանը. ուսանողներին տեղեկացնել ակադեմիական ազնվության Կանոնակարգի դրույթների մասին:
- Պարբերաբար կազմակերպել սեմինարներ և քննարկումներ Քոլեջի շահակիցների /ուսանողներ, դասախոսներ, ծնողներ, խորհրդատու/ հետ՝ ակադեմիական ազնվության վերաբերյալ:
- Յուրաքանչյուր քննական շրջանից առաջ ուսանողներին և դասախոսների տեղեկացնել թույլատրելի պարագաների ցանկի մասին /պաստառներ, աղյուսակներ, գծապատկերներ և այլ ձևերով/:

4.2. Դասախոսի դերն ակադեմիական ազնվություն ապահովելու գործում

- Մասնակցել ակադեմիական ազնվության փաստաթղթի ստեղծման, մշակման և վերանայման գործընթացին:
- Սովորողների մոտ կարևորել խնդիրները ինքնուրույնաբար լուծելու, հետազոտություններ անելու և տեղեկատվական գրագիտության հմտություններ ձեռք բերելու կարևորությունը:
- Սեփական օրինակով ձևավորել և զարգացնել ակադեմիական ազնվության կանոնները պահպանելու և դրանց հետևելու կարողություններ:
- Մասնակցել ակադեմիական ազնվության վերաբերյալ քննարկումներին, դասընթացներին և այլն:

4.3. Ուսանողի դերն ակադեմիական ազնվություն ապահովելու գործում

- Գիտենալ ակադեմիական ազնվության քաղաքականության դրույթները:
- Հարգանք դրսևորել և պահպանել այլ մարդկանց մտավոր սեփականությանը առնչվող հիմնարար պահանջները:
- Ցանկացած աշխատանք կատարելիս ընդունել և խստորեն հետևել էթիկական չափանիշներին:
- Այլ հեղինակների աշխատություններից հատվածներ օգտագործելիս անպայման ներկայացնել որպես ուրիշի ուղակի խոսք:
- Աշխատանքի վերջում պարտադիր ունենալ մատենագրություն, որտեղ նշված լինեն բոլոր տեղեկատվական աղբյուրները:
- Ուսանողական խորհուրդի կազմում մասնակցել ակադեմիական ազնվության փաստաթղթի վերանայման գործընթացին:

4.4. Ծնողների դերն ակադեմիական ազնվություն ապահովելու գործում

- Տեղյակ լինել ակադեմիական ազնվության փաստաթղթերին:
- Մասնակցել ակադեմիական ազնվությանն առնչվող քննարկումներին՝ առաջադրելով իրենց կարծիքները և առաջակությունները:

5. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

5.1. Քոլեջի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը յուրաքանչյուր նոր աշխատակցի կամ ուսանողի ծանոթացնում են սույն կանոնակարգի հետ, ներկայացնում են ակադեմիական ազնվության չափանիշները և դրանց խախտման հետևանքները, զգուշացնում են, որ ակադեմիական անազնվություն դրսևորելը պատժելի է:

5.2. Ուսանողների և աշխատակիցների հետ կնքվող պայմանագրերում ներառվում է առանձին կետ, համաձայն որի նրանք տեղեկացված են ակադեմիական ազնվության սույն կարգի դրույթներին և դրանք խախտելու դեպքում կարող են ենթարկվել պատասխանատվության:

5.3. Ակադեմիական ազնվության խախտման դեպքում՝

- սովորողը հանդիպում է ունենում ամբիոնի վարիչի և հարկ եղած դեպքում տնօրենի հետ,
- կազմակերպվում է հանդիպում սովորողի ծնողի հետ,
- սովորողի աշխատանքը գնահատվում է «0»՝ առանց վերահանձման հնարավորության,

5.4. Համաձայն Քոլեջի Ներքին կարգապահական կանոնների ուսանողը հեռացվում է Քոլեջից ակադեմիական ազնվության վարքականոնների խախտման, մասնավորապես ընթացիկ և եզրափակիչ քննությունների կամ ստուգարքների ընթացքում տեխնիկական միջոցների կիրառման կամ ցանկացած այլ մեթոդով կատարած արտագրության, արտագրության փորձի և սղագրության հայտնաբերման դեպքում՝ քննություն ընդունող դասախոսը դադարեցնում է տվյալ ուսանողի քննությունը, նրան հեռացնում է քննասենյակից:

5.5. Ուսանողը, ակադեմիական անազնվություն դրսևորելու պարագայում, կարող է կրկնել դասընթացը, մնալ նույն կուրսում, դուրս մնալ Քոլեջից:

5.6. Դասախոսական, ուսումնաօժանդակ կազմի ներկայացուցիչների կամ Քոլեջի այլ աշխատակիցների կողմից ակադեմիական ազնվության սկզբունքների խախտման կամ անազնվության դրսևորման դեպքերը քննարկվում են Քոլեջի էթիկայի հանձնաժողովում՝ այդ հանձնաժողովում հարցերի քննարկման ընթացակարգով:

5.7. Ե՛վ ուսանողին, և՛ Քոլեջի այլ ներկայացուցիչների տրվում են գրավոր նկատողություններ, որոնցում հստակ նկարագրվում է նրանց կողմից դրևորած անազնիվ վարքը:

6. ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Սույն կանոնակարգը հաստատում է Քոլեջի Տնօրինական խորհուրդը:

6.2. Կանոնակարգում փոփոխություններ ու լրացումներ կարող են կատարվել Քոլեջի Տնօրինական խորհրդի որոշմամբ՝

- տնօրենի,
- Տնօրինական խորհրդի անդամների,
- ուսանողական խորհրդի,
- որակի ապահովման պատասխանատուի առաջարկությամբ: